ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ԿԵՆՏՐՈՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ANQA-2021/61

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 դեկտեմբերի 2020 թ. N 61

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԲՈՂՈՔԻ ՄԱՍԻՆ

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՈԱԱԿ) Հավատարմագրման Հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), ղեկավարվելով «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ, ՈԱԱԿ-ի հոգաբարձուների խորհրդի 2020 թվականի մայիսի 8-ի N 1-Լ որոշմամբ ընդունված «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի հավատարմագրման հանձնաժողովի ձևավորման և գործունեության ընթացակարգով» (այսուհետ՝ Ընթացակարգ), 2021 թվականի դեկտեմբերի 7-ի նիստում քննարկեց «ՀՀ պետական կառավարման ակադեմիա» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ ՀՀ ՊԿԱ, Ակադեմիա) դիմում- բողոքը:

Դիմում- բողոքի պահանջը (առարկան).

Ակադեմիան, առաջնորդվելով ՀՀ Կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978-Ն որոշմամբ հաստատված Հավատարմագրման կարգով և ՈԱԱԿ-ի հոգաբարձուների խորհրդի 2020 թվականի մայիսի 8-ի N 1-Լ որոշմամբ ընդունված Ընթացակարգի դրույթներով, խնդրում է վերանայել Հանձնաժողովի որոշումը:

Գործի համառոտ նախապատմությունը.

ՈԱԱԿ-ի Հավատարմագրման հանձնաժողովը 2020 թվականի դեկտեմբերի 24-ի N 37 որոշմամբ «Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիա» ՊՈԱԿ-ին շնորհել է պայմանական ինստիտուցիոնալ հավատարմագրում 2 (երկու) տարի ժամկետով:

2021թ. մայիսի 12-ին Ակադեմիան ներկայացրել է ՈԱԱԿ-ի Հավատարմագրման հանձնաժողովի 2020 թվականի դեկտեմբերի 24-ի N 37 որոշումը վերանայելու մասին դիմում-բողոք:

Ընթացակարգով սահմանված ժակետներում ձևավորվել է Հանձնաժողովի երեք անդամներից բաղկացած Բողոքարկման հանձնախումբ, որը մեկ ամսյա ժամկետում ուսումնասիրել է Ակադեմիայի բողոքը և կազմել եզրակացություն: Եզրակացությունն ուղարկվել է

Հոգաբարձուների խորհուրդ, իսկ Խորհուրդն եզրակացությունն ուղարկել է Հանձնաժողով՝ նիստ գումարելու և որոշում կայացնելու համար:

Ուսումնասիրելով Ակադեմիայի դիմում-բողոքի հիման վրա կազմված Բողոքարկման հանձնախմբի եզրակացությունը, հավատարմագրման գործընթացի փաստաթղթերում ներկայացված փաստերը, հիմնավորումները և հիմքերը, բողոքարկող կողմի ներկայացրած փաստերն ու փաստարկները, ինչպես նաև փորձագիտական խմբի զեկույցը, լսելով ՀՀ պետական կառավարման ակադեմիայի դիմում-բողոքի վերաբերյալ Հանձնաժողովի նախագահի կողմից ընտրված երեք անդամների եզրակացությունները, ինչպես նաև հանձնաժողովի անդամների դիտարկումներն ու առաջարկությունները, **Հանձնաժողովը քննարկման արդյունքում ամրագրեց իր դիրքորոշումը Ակադեմիայի բողոքում նշված փաստարկների վերաբերյալ.**

1. Բողոքարկող կողմը համամիտ չէ «Ակադեմիայում սահմանված չեն պրոֆեսորադասախոսական կազմին ներկայացվող մասնագիտական պահանջները» պնդման հետ և համարում է, որ դրանք սահմանված են՝ մեջբերելով տարբեր դասակարգիչներ (այդ թվում, օրինակ՝ Ռուսաստանի Դաշնության զբաղմունքների դասակարգիչը): Բողոքարկող կողմը ներկայացնում է նաև, որ առկա է «Պրոֆեսորադասախոսական կազմին ներկայացվող մասնագիտական պահանջները» փաստաթուղթը (հաստատված 2016 թվականին): Ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ տվյալ փաստաթուղթը նախապես ներկայացված չի եղել փորձագետներին և, հետևաբար, չի դիտարկվել որպես առկա փաստաթուղթ: Ավելին, պաշտոնների տեղակայումը դեռևս չի իրականացվում մրցութային կարգով, ինչը կարող է խոչընդոտել մրցունակ, նախապես հաստատված չափանիշներին համապատասխանող կադրերի ընտրությանը: Ներկայացված զբաղմունքների դասակարգիչները ՊԴ կազմին ներկայացվող մասնագիտական պահանջներ չեն պարունակում և անհասկանալի է հղումը տվյալ փաստաթղթին:

2. Առկա են առանցքային խնդիրներ Կրթական ծրագրերի մշակման և մշտադիտարկման, թեզերի որակի ապահովման ուղղությամբ (առկա են գրագողության ակնհայտ դեպքեր) և նախորդ հավատարմագրումից հետո որակի ապահովման գործընթացները չեն հանգեցրել ՄԿԾ-ների որակական փոփոխությունների, թեզերի բարելավումների, բացակայում են նաև համապատասխան վերլուծություններ՝ բարելավումները փաստող: Նշյալ հանգամանքները բավարար հիմքեր չեն ստեղծում ակադեմիայի որակավորումների արժանահավատ շնորհումը գնահատել որպես լիարժեք բավարար:

3. Հավելյալ ուսումնասիրությունների արդյունքում կրկին պարզ դարձավ, որ նախորդ հավատարմագրումից հետո առաջխաղացման միտումներ առկա են, սակայն միևնույն ժամանակ որակավորումների արժանահավատ շնորհման տեսանկյունից դեռևս առկա են ռիսկեր: Նախորդ հավատարմագրումից հետո ակադեմիան չի ապահովել բարելավումների բավարար մակարդակ:

4. Բողոքարկող կողմը համամիտ չէ արդյունքահեն կառավարման թերացումների վերաբերյալ փորձագիտական խմբի և հավատարմագրման հանձնաժողովի դիտարկումների հետ: Ակադեմիան մեջբերում է 2017 թվականին ASIIN-ի կողմից ստացված արտաքին փորձաքննության դրական արդյունքները և եզրակացությունը (GOVERN ծրագրի շրջանակներում), ինչպես նաև մի շարք ուղղություններով բուհի գրանցած դրական դինամիկան (ուսանողների թվի աճ, աշխատանքի տեղավորման ցուցանիշ, աշխատավարձերի բարձրացում և այլն): Փորձագիտական խմբի և

հանձնաժողովի դիտարկումները, ինչպես նաև չափանիշներով և չափորոշիչներով սահմանված պահանջները վերաբերում են ստացված արդյունքների չափելիության ապահովմանը, առանց որի հնարավոր չէ իրականացնել մշտադիտարկում, արդյունավետության գնահատում և արդյունքահեն կառավարում:

5. Հարկ է նշել, որ Ակադեմիայի Ռազմավարական ծրագրում (ՌԾ) և ՌԾ-ից բխող միջոցառումների ծրագրում բացակայում են արդյունավետության գնահատման թիրախային քանակական ցուցիչներ/ցուցանիշներ, հետևաբար հնարավոր չէ իրականացնել արդյունավետության գնահատում. ներկայացված են «ակնկալվող արդյունքները» (օրինակ՝ Մագիստրոսական թեզերի բովանդակությունից, նորարարական, հետազոտական, ստեղծագործական, վերլուծական բաղադրիչներից ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների բավարարվածության աստիճան) և «արդյունքային ցուցիչներ և չափման միավորներ», որոնք հիմնականում նկարագրողական բնույթի են և անհասկանալի է, թե տվյալ ցուցիչներով ինչպես է իրականացվել կամ իրականացվելու արդյունավետության գնահատում (օրինակ՝ Դասախոսների հարցումների արդյունքների ուսումնասիրություն, Արտաքին փորձագետի կարծիքի ապահովում և այլն). բացակայում են թիրախային քանակական և որակական ցուցիչներ, որոնց միջոցով հնարավոր կլիներ գնահատել սահմանված ուղղություններով ռազմավարական արդյունքը բավարար է, թե թերի կատարված:

6. Բուհում կրթական ծրագրերի և ուսանողների թվի ավելացած լինելու, նյութատեխնիկական ռեսուրսների բարելավված լինելու, աշխատողների աշխատավարձի բարձրացված լինելու, շրջանավարտների մեծ մասի՝ պետական և մասնավոր հատվածներում աշխատանքի անցնելու հանգամանքները, ինչ խոսք, վկայում են կառավարման ոլորտում դրական միտումների մասին, դրանք կառավարման արդյունավետությունը բնորոշող անհրաժեշտ, սակայն ոչ բավարար ցուցիչներ են: Նախ՝ էական նշանակություն ունի այն հանգամանքը, թե որքանո՞վ են բարելավված ցուցանիշները, բարելավվածության այդ չափը բավարա՞ր է բուհի ռազմավարական նպատակներն ապահովելու համար, թե ոչ: Այս հարցի վերաբերյալ վերլուծության բացակայությունը թույլ չի տալիս նշված արդյունքների հիման վրա դատողություններ անել բուհում կառավարման արդյունավետության վերաբերյալ: Փորձագիտական խմբի, ինչպես նաև հավատարմագրման հանձնաժողովի ակնկալիքը և պահանջը թերի է ընկալված և առկա է ռիսկ՝ հաջորդ հավատարմագրման ընթացքում խնդիրների պահպանման և արդյունքահեն կառավարման մշակույթի բացակայության: Վերջինը, կարծում ենք, կարևոր է հատկապես՝ «բարձր որակավորում ունեցող ղեկավար կադրերի պատրաստման պահանջները բավարարող բարձրագույն կրթական հաստատության» (մեջբերված է առաքելությունից) առաքելությամբ բուհի դեպքում:

7. ՀՀ ՊԿԱ-ի առաքելությամբ սահմանված է գիտական և կիրառական հետազոտական աշխատանքների կատարումը, պետական կառավարման ոլորտի՝ տեղեկատվավերլուծական նյութերով ապահովումը, պետական կառավարման ոլորտում միջազգային գիտակրթական համագործակցությունը: Փորձագետների կողմից անբավարար էր գնահատվել վերոհիշյալ ուղղություններից երկու առանցքային չափանիշները (VI, IX), որոնց վերաբերյալ բուհը ներկայացրել է դիտարկումներ: Միջազգայնացման և արտաքին կապերի առումով բուհը ներկայացնում է պայմանագրերի թվային ցուցանիշներ, որոնք կնքվել են վերջին տարիներին և, օբյեկտիվորեն, դեռևս չեն ազդել կրթության և հետազոտության որակի բարելավման և միջազգայնացման վրա: Ակնհայտ է, որ բուհը որոշակի աշխատանքներ այս ուղղությամբ կատարել է, սակայն դեռևս դրանք չեն հանգեցրել բուհի զարգացմանը. օրինակ, բուհը նշում է հետևյալ ասոցիացիաների և

միությունների անդամակցության փաստը, սակայն անհասկանալի է, թե այդ անդամակցություններն ինչպես են ազդում բուհի զարգացման վրա. IASIA, NISPAcee, ENTO, ECBE, IAU WHED: Բուհը նշում է նաև մի շարք պայմանագրերի մասին (ավելի քան 40), սակայն կրկին հասկանալի չէ, թե տվյալ պայմանանգրերը բովանդակային առումով ինչպես են ազդել բուհի զարգացման վրա: Պայմանագրերի քանակը որպես հաջողության ցուցանիշ ընդունելով՝ բուհը շեղվել է համագործակցությունների որակից: Նույն կերպ, կառավարման արդյունավետության մասին խոսելիս բուհը ներկայացնում է ուսանողների թվի աճը՝ ընդունվողների որակական հատկանիշներն անտեսելով: Երկու դեպքում էլ հնարավոր չէ գնահատել արդյունավետությունը (թիրախային ցուցիչների/ցուցանիշների բացակայության պարագայում) :

Բուհում միջազգային համագործակցությունն առավել ռեակտիվ (արձագանքում է առաջացած հնարավորություններին) բնույթ է կրում, քան պրոակտիվ (երբ բուհն է նախաձեռնում նպատակային համագործակցություններ՝ ռազմավարությամբ սահմանված խնդիրների լուծման նպատակով). բացակայում են համակարգված, արդյունքահեն, ռազմավարական պլանավորման մոտեցումներն ինչպես հետազոտությունների և զարգացման, այնպես էլ միջազգայնացման ուղղությամբ, ինչը կրկին կառավարման և վարչարարության առանցքային բացթողումներից է եղել հավատարմագրման գործընթացքում:

8. Հատկանշական է, որ Ակադեմիան նախորդ հավատարմագրումից հետո (2014), 4 տարիների ընթացքում համակարգված կերպով չի իրականացրել փորձագետների կողմից տրված նշյալ երկու չափանիշների վերաբերյալ խորհրդատվությունները, ինչի արդյունքում էլ աշխատանքները շարունակվել են կազմակերպվել առավել հատվածավորված և ոչ ռազմավարական մոտեցմամբ:

Ելնելով վերը նշվածից, Հավատարմագրման Հանձնաժողովը բաց քվեարկության արդյունքում

ՈՐՈՇԵՑ

1. «ՀՀ պետական կառավարման ակադեմիա» ՊՈԱԿ-ին 2 /երկու/ տարի ժամկետով պայմանական ինստիտուցիոնալ հավատարմագրում շնորհելու մասին Հավատարմագրման Հանձնաժողովի 2020 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 37 որոշումը թողնել անփոփոխ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում դրա պատճենը «ՀՀ պետական կառավարման ակադեմիա» ՊՈԱԿ-ին հանձնելուն հաջորդող օրվանից:

Հավատարմագրման Հանձնաժողովի

նախագահ **Աշոտ Սաղյան**

2021 թ., դեկտեմբերի 7

ք.Երևան